

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

*Մաֆարյան Ալեքսանդր¹
Գալշոյան Սիրանույշ²*

**ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Թուրքերենը Երևանի պետական համալսարանում դասավանդվում է 1940-ական թթ., ինչի անմիջական նախաձեռնողը և կազմակերպիչը եղել է մեծանուն արևելագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը, սակայն թուրքերենի դասավանդման գործընթացում մինչև 2001թ. օգտագործվել են թուրքիայում կամ նախկին ԽՍՀՄ թուրքագիտական կենտրոններում հրատարակված (թուրքերեն կամ ռուսերեն) դասագրքեր, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկներ ու բառարաններ: Հարկ է նշել, որ օսմանահպատակ հայերի ուսուցման համար նախատեսված տարաբնույթ դասագրքեր հրատարակվել են Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում: Հիշարժան է Հր. Աճառյանի վկայությունն Օսմանյան կայսրությունում հայ գործիչների դասագրքաստեղծ ավանդի մասին. «Նույնիսկ տաճկերեն լեզվի համար առաջին եվրոպական ռճով ու նոր մեթոդով դասագրքերը հայերը պատրաստեցին (ընդգծումը մերն՝ Ա. Մ., Ս. Գ.): Այսպես՝ Միհրան Աբիկյանը, Ռեթիկ հոջան, Սարայդարյանը և Ջեքի Կարապետյանը, որոնց պատրաստած դասագրքերը տաճկական

¹ Պ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ, էլ. փոստ՝ alexander-safarian@ysu.am

² Բ.գ.թ., ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ siranuysh.galshoyan@ysu.am

դպրոցներում գործածության դրվեցին... Միհրան Աբիկյանը 50 անուն դասագիրք է գրել («Մութավվել սարֆի Օսման»)՝³ Ինքը՝ Աստվածատուր օժտվածությամբ լեզվաբան-տեսաբան ու «պոլիգլոտ» Հրաչյա Աճառյանը, (ով յոթ տարեկանից Կոստանդնուպոլսի Արամյան վարժարանում, միաժամանակ հայերեն, ֆրանսերեն ու «տաճկերեն այբուբենն» էր սերտել, այնուհետև երկար տարիներ աշակերտել վերոհիշյալ «նշանավոր տաճկագետ» Միհրան Աբիկյանին, ավարտել Կեդրոնական վարժարանը), անտարակույս, կատարելապես տիրապետում էր օսմաներենին ու թուրքերենին⁴ (ինչպես նաև գիտեր այլ թյուրքական լեզուներ) ինչ-ինչ պատճառներով⁵ թուրքերենի դասագիրք այդպես էլ չի հրատարակել (հատկանշական է, որ արդեն 1940թ. ԵՊՀ հրատարակությամբ լույս է տեսել պրոֆեսոր Աճառյանի «Պարսկերենի ձեռնարկը»)։ Այսուհանդերձ Հրաչյա Աճառյանի «Լիակատար քերականության», «Արմատական բառարանի», «Անձնանունների բառարանի» և այլ աշխատությունների մեջ, բնականաբար, բազում հույժ արժեքավոր թյուրքագիտական անդրադարձներ կան, որոնք ուղենիշային են դարձել հայ լեզվաբանների, մեր թուրքերենի դասախոսների համար։ Ակադեմիկոս Աճառյանը թուրքերենից (կամ թյուրքական այլ լեզուներից) օրինակներ է բերում նաև ընդհանուր, համեմատական ու զուգադրական լեզվաբանության տարբեր

³ Հ. Աճառյան, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, (աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի), էջ 21-22; Հատկանշական է, որ այս աշխատության մեջ հեղինակը նաև վկայում է. «Ռեֆիկ հոջան այնպիսի հմուտ տաճկագետ էր, որ տաճիկ մոլլաները գալիս էին չորում նրա մոտ և տաճկերեն սովորում»։ Նույն տեղում, էջ 22:

⁴ Մասնավորապես տե՛ս Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 31, 73-74, 95, 108, 117-118:

⁵ Տե՛ս նաև հմտ. Ռ. Ավագյան, Ալ. Մաֆարյան, Բոնադատված Հրաչյա Աճառյանի «գործը» (գիտնականի կենսագրության երկու անհայտ տարիներ), Արևելագիտական հանդես - «Իրան-Նամե», թիվ 4-5, (20-21), Եր. 1996, էջ 10-14:

հիմնահարցեր լուսաբանելիս (նման մի օրինակ ստորև կներկայացնենք ծավալուն մեջբերմամբ): «Լիակատար քերականության» վեցերորդ հատորի «Ձայնավորների ձայնափոխությունը» գլխում, անդրադառնալով թյուրքական բոլոր լեզուներին բնորոշ ձայնավորների ներդաշնակության օրենքին, Հր. Աճառյանը նշում է, որ այն «հատուկ է գլխավորապես ուզրոֆիննական, այթայական (ընդգծումը մերն է՝ Ա. Ս., Ս. Գ.), մալայերեն և պոլինեզյան զանազան լեզուներին: Այս օրենքի համեմատ, եթե բառի առաջին վանկի ձայնավորը կատկային է, մյուս բոլոր ձայնավորներն էլ կատկային են դառնում, իսկ եթե քմային է, բոլորն էլ քմային են դառնում... Երևույթի հիմնական բացատրությունն այն է, որ բառի անշեշտ վանկերի ձայնավորներն, ազդվելով շեշտյալ վանկի ձայնավորից, փոխում են իրենց երանգը և մոտենում նրան:

Թուրքերենի մեջ ձայնավորները բաժանվում են երկու խմբի՝ ծանր և թեթև, ծանրերն են՝ a, ə, o, u, թեթևներն են՝ e (â), i, ö, ü, երբ բառի առաջին ձայնավորը ծանր է, մյուս բոլոր ձայնավորներն էլ վերածվում են համապատասխան ծանրի, իսկ եթե առաջին ձայնավորը թեթև է, մյուսներն էլ լինում են թեթև: Մրա համեմատ թուրքերենի բոլոր մասնիկներն ու վերջավորություններն էլ լինում են երկու ձևով՝ ծանր ու թեթև. օրինակ՝ «ուրություն» մասնիկն է «ևզ» կամ «lik», բացառական հոլովի վերջավորությունն է «dan, den», ապառնի վերջավորությունն է jayəm, jegim և այլն»⁶:

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Լ. Ք. Հ. Լ. Համեմատությամբ 562 լեզուների, հատոր VI, (Տպագրության պատրաստեց և խմբագրեց պրոֆ. Բ. Բ. Ադայան), ՀԱԱՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 438: Հավելենք, որ «Լիակատար քերականության» վերոհիշյալ մեջբերման մեջ, ինչպես և հետայսու, ճշգրիտ կերպով պահպանել ենք Աճառյանի երկերի տպագրված (շարվածքի) տեքստը:

Միաժամանակ անկարելի է չարձանագրել, որ այնպիսի սովորածավալ հրատարակություններ, ինչպիսիք էին աճառյանական «Լիակատար քերականությունը» կամ «Արմատական բառարանը», թերևս, չէին կարող զերծ լինել տարաբնույթ պատճառներով պայմանավորված, մասնավորաբար տեխնիկական ու խմբագրական ցավալի վրիպակներից, (նամանավանդ հաշվի առնելով լինոտիպային հին տպագրության՝ երիտասարդ հեղինակներին և ընթերցողներին պարզապես անծանոթ առանձնահատկությունները): Բերենք «Լիակատար քերականության» «Լեզուների ցանկ» հավելվածից հենց հեղինակի՝ ակադեմիկոս Աճառյանի համար (ինչպես ցույց կտանք ստորև) բացարձակապես անընդունելի ձևակերպման մի ակնառու օրինակ. «Թուրքական լեզուներ – Այժմ այսպես են կոչում ուրալ-ալթայան ընտանիքը»⁷:(?): Խորհրդային արևելագետների համար դասագրքային ճշմարտություն էր, որ «թյուրքական լեզուներն ալթայան ընտանիք մտնող, ընդհանուր ծագումնաբանական և տիպաբանական հատկանիշներով բնութագրվող ազգակից լեզուների խումբ են»⁸: Ակնհայտ է, որ «ալթայան լեզուներ» հասկացությունն առավել լայն է, որը հանրագիտարանային ձևակերպմամբ, ընդգրկում է ոչ միայն «թյուրքական» (թյուրքական), այլև մոնղոլական և տունգուս-մանջուրական լեզուները⁹: «Ուրալյան լեզուներ» հասկացությունը (կրկին հանրագիտարանային ձևակերպմամբ) ընդգրկում է մերձբալթյան-ֆիննական, սաամական, մորդվական, վոլգա-ֆիննական,

⁷ Տե՛ս Ն. Աճառյան, Լ. Ք. Հ. Լ. Համեմատությամբ 562 լեզուների, հատոր I, , ՀԱԱՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 466:

⁸ Н. А. Баскаков, Введение в изучение тюркских языков, Москва, 1962, стр. 76.

⁹ Մասնավորապես տե՛ս և հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1, Երևան 1974, էջ 161, հատոր 4, Երևան, 1978, էջ 194:

մարիական, պերմական, ուզբական, սամոդիական լեզուները¹⁰: «Ուրալ-ալթայան ընտանիքը» (կամ «գերընտանիքը») է՛լ ավելի ընդգրկուն հասկացություն է, ուրալյան և թյուրքական լեզուների «ազգակցությունը» առավել քան հեռավոր է, թեև 20-րդ դարի սկզբին այն քաղաքական նպատակներով իսկապես փորձել են շահարկել այսպես կոչված «ծայրահեղ» պանթուրքիզմի որոշ ջատագույններ: Ստորև կրկին ծավալուն մեջբերմամբ մի ուշագրավ վկայություն ենք ներկայացնում աճառյանական հուշագրությունից. «Յօրր-ի քառահատոր քերականությունը այնպես էր ազդել իմ վրա, որ ես աշակերտական ոգևորությամբ ուզեցի կազմել ուզբո-ֆիննական և ուրալ-ալթայական լեզուների համեմատական քերականությունը: Իմ նյութական սուղ միջոցներով Եվրոպայից բերել տվի հունգարերենի, ֆիններենի և թունգուզերենի քերականություններ ֆրանսերեն լեզվով: Տաճկերեն արդեն գիտեի: Այս չորս լեզուների քերականության վրա համեմատություններ անելով տեսա, որ ինչպես քերականության, նույնպես և բառամթերքի համար ընդհանուր բան չկա: Այսպիսով ես եզրակացրի, թե այդ լեզուները մի ընտանիք չեն կազմում (ընդգծումը մերն է – Ա. Ս., Ս. Գ.) և իմ նպատակից հրաժարվեցի: Շատ ու շատ տարիներ հետո գիտունները գտան, որ այդ լեզուների մեջ կապ չկա»¹¹:

¹⁰ Մասնավորապես տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 10, Երևան 1984, էջ 158, նույն տեղում, հատոր 12, Երևան, 1986, էջ 179:

¹¹ Մասնավորապես տե՛ս Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 108: Ուզբոֆիննական և ալթայան լեզուները հստակ տարանջատված են նաև Աճառյանի «Լիակատար Քերականության» ձայնավորների ներդաշնակության երևույթը լուսաբանող վերոհիշյալ մեջբերման մեջ, ինչն ընդգծել ենք: Հիմնահարցի լուսաբանումը թուրք լեզվաբանների հեղինակած դասագրքերում տե՛ս և հմնտ. Prof. Dr. Muharrem Ergin, Türk Dilbilgisi (Edebiyat ve Eğitim

*

* *

Ինչպես նշել ենք, տասնամյակներ շարունակ հայ թուրքագետ-դասախոսները և ուսանողները թուրքերենի (և օսմաներենի) դասավանդման գործընթացում օգտագործել են ռուսաստանյան հեղինակների՝ ռուսերեն հրատարակված դասագրքերը, ձեռնարկները, մենագրությունները, անուրանալի է, որ Ռուսաստանի կայսրությունում, այնուհետև Խորհրդային Միությունում ձևավորվել է թուրքագիտական-բանասիրական գերհզոր դպրոց (բնականաբար համալսարանական և ակադեմիական ինստիտուտների թուրքագիտական կենտրոնները ահռելի աշխատանք են տարել նաև համապատասխան դասագրքերի ու բառարանների ստեղծման ուղղությամբ): Հայաստանյան թուրքագետներին քաջածանոթ են և նրանցից շատերի «սեղանի գիրքն» են դարձել Վ. Գորդլևսկու, Ա. Սամոյլովիչի, Ա. Կոնոնովի և այլոց «դասական» դարձած դասագրքերը¹² և բառարանները¹³: Հրատարակման պահից մինչև

Fakültelerinin Türk Dili ve Edebiyatı Bölümleri için), İstanbul, 2001, s. 9, Nurettin Koç, Yeni Dilbilgisi, İstanbul, 1996, s. 46-51:

¹² Թուրքագիտական ուսումնական և մեթոդական հսկայածավալ ռուսերեն գրականությունից մասնավորապես տե՛ս՝ В. А. Гордлевский, Руководство для изучения Османского языка, По материалу Г. Еглички, Москва, 1916, Его же Избранные сочинения, том II (Язык и литература), Москва, 1962, А. Н. Самойлович, Краткая учебная грамматика османско-турецкого языка, Ленинград, 1925, А. Н. Кононов, Грамматика современного турецкого литературного языка, Ленинград, 1956, Его же Очерк истории изучения турецкого языка, Ленинград, 1976, П. И. Кузнецов, Е. В. Сумин, Учебник турецкого языка. Основной курс. Книга I, Москва, 1970, М. С. Айляров, Учебник турецкого языка (под редакции академика В. А. Гордлевского), Москва, 1954, П. С. Аровина, Учебник турецкого языка для 2-го года обучения, Москва, 1972, Ю. В. Щека, Интенсивный курс турецкого языка: Учебник, Москва, 1996, С. Н. Иванов, Курс турецкой грамматики. Часть 1. Грамматические категории имени существительного, Ленинград., 1975, Часть 2. Грамматические категории глагола, Ленинград, 1977.

2001թ. ԵՊՀ նախ բանասիրական, այնուհետև (1968թ.-ից) արևելագիտության ֆակուլտետներում թուրքերենի դասավանդման գործընթացում որպես հիմնական դասագիրք է ծառայել Շ. Այյարովի հեղինակած և մոսկովյան թուրքագիտական-բանասիրական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Վ. Գորդլևսկու խմբագրությամբ հրատարակված թուրքերենի դասագիրքը, որը տարիներ շարունակ (դասախոսությունների ձևով) թարգմանաբար մատուցվել է դասախոսների և գրի առնվել ուսանողների կողմից (հայերեն թարգմանությունը անգամ ռոտոպրիմտ տպագրությամբ այդպես էլ լույս չընծայվեց): Այյարովյան դասագրքի անուրանալի առավելությունն են մատչելի ու կուռ շարադրանքը, թուրքերենի հնչյունական համակարգը, այն տարիների համար գործածական բառապաշարը, ձևաբանական և շարահյուսական իրողությունները (առանձնահատկությունները) վարպետորեն ներկայացնելը: Բնականաբար դասագիրքը զերծ չէր թերություններից, որոնց շտկումն ակնառու է ռուսաստանցի հեղինակների՝ հետագայում լույս ընծայած դասագրքերում: Նորանկախ Հայաստանում հառնեց մայրենի և պետական լեզվով դասագրքաստեղծ գործունեության վերընթացի հրամայականը, ԵՊՀ թուրքագիտության (վերանվանումից հետո՝

¹³ Մասնավորապես տե՛ս А. Н. Баскаков, Н. П. Голубева, А. А. Кямилаева, К. М. Любников, Ф. А. Салимзянова, Р. Р. Юсипова, Турецко-русский словарь (48000 слов), Москва, 1977 (Նույն բառարանը արտատպվել է Մոսկվայում, 1998թ., “Большой турецко-русский словарь” անվանումով ու տիտղոսաթերթի վրա՝ «120 հազար բառ և բառակապակցություն» նշումով), Е. Л. Гальперина, русско-турецкий словарь политических, дипломатических и правовых терминов, Москва, 1952, Б. Н. Ибрагимова, Краткий турецко-русский, русско-турецкий внешне-торговый словарь, Москва, 1957, Э. М. Мустафаев – Э., В. Г. Щербинин, Русско-турецкий словарь (47000 слов), Москва, 1972, Б. М. Хохлов, Турецко-русский военный словарь, Москва, 1968.

թյուրքագիտության) ամբիոնի դասախոսները հրատարակեցին թուրքերենի դասավանդման սկզբունքների մասին մեթոդական աշխատանքներ¹⁴, թուրքերենի քերականության, հնչյունաբանության ու բառագիտության մի շարք հարցերի քննությունը դարձավ ատենախոսությունների թեմա, ուսումնասիրություններ կատարվեցին թյուրքական լեզուների համեմատական և հայերենի լեզվական իրողությունների հետ զուգադրական քննությամբ (մասնավորապես, վերլուծության ենթարկվեցին թուրքերենի դերբայական համակարգը¹⁵, բայասեռը¹⁶, կրկնավոր և հարադիր բարդությունները)¹⁷: Երևանի

¹⁴ Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Ռ. Մելքոնյան, Ք. Միրզոյան, Թուրքերենի ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 19 էջ:

¹⁵ Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Ժամանակակից թուրքերենի դերբայների և նրանց դասավանդման մի քանի առանձնահատկությունների մասին, Երիտասարդ արևելագետների հանրապետական XX գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ, Եր 1999: Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան, Ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցի շուրջ, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 243-260: Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան, Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայների իմաստաքերականական յուրահատկությունների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, 2011, էջ 34-56:

¹⁶ Լ. Սահակյան, Շ. Ջաքարյան, Թուրքերենի պատճառական-հարկադրական սեռի իմաստագործառական առանձնահատկությունները, «Արևելագիտության հարցեր», Երևան, 2016 ջ 218-228:

¹⁷ Դ. Հայրապետյան, Թուրքերեն-հայերեն և հայերեն-թուրքերեն բառարանների լեզվապատմական արժեքի շուրջ, Կրթությունը և գիտությունը Արցախում, Երևան, 2011, 1-2, էջ 188-191: Նույնի ժամանակակից թուրքերենի բայական հարադիր բաղադրությունների և կրկնավորների խոնարհված և շաղկապական ձևերը, Լեզու և կրթություն 4, Երևան, 2012, էջ 31-38: Նույնի ժամանակակից թուրքերենի բայական կրկնությունները, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հատոր 7, էջ 395-408: Նույնի ժամանակակից թուրքերենի արմատական կրկնությունների տեսակներ, Կանթեղ 1 (54) (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 80-88: Նույնի, Թուրքերենի ոչ լիարժեք բառային միավորներով կազմված հարադրություններ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2013, հատոր 8, էջ 267-272: Д. Айрапетян, Парные словосочетания с

պետական համալսարանում ստեղծվեցին օտար (մասնավորապես արևելյան) լեզուների դասագրքեր, որոնք, անշուշտ, նպատակառոտ դրված էին հայ ուսանողներին, հաշվի էին առնվելու վերոհիշյալ լեզուների դասավանդման առանձնահատկությունները, հայերենի և թուրքերենի քերականական, հնչյունական համակարգերի, բառապաշարի «ուրույն գուգահեռները»: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի մասնագետների բազմամյա ու սերտ համագործակցության արդյունքում ստեղծվեցին թուրքերենի¹⁸, ադրբեջաներենի¹⁹, օսմաներենի²⁰, թուրք գրականության²¹, Օսմանյան կայսրության²² և Թուրքիայի Հանրապետության պատմության²³ դասագրքերը:

синонимичными компонентани в современном турецком языке, Азия и Африка: Наследие и современность, том 1, Материалы конгресса, Санкт Петербург, 2017, том 1, с. 272-273.

¹⁸ Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյոզյան, Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, վեցերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2015 (առաջին անգամ լույս է տեսել 2001թ. «Արտագերս» հրատարակչությունում, հեղինակներ՝ Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան): ՀՀ ԿԳՆ կողմից որպես բուհական դասագիրք երաշխավորված այս «Թուրքերենի դասագիրքը» օգտագործվում է հայաստանյան և սփյուռքահայ բոլոր այն բուհերում ու դպրոցներում, որտեղ դասավանդվում է թուրքերենը: Դասագրքի տարբեր հրատարակությունների առթիվ լույս են տեսել շուրջ երկու տասնյակ գրախոսականներ, մասնավորապես դոցենտներ Վ. Պետրոսյանի և Ք. Միրզոյանի գրախոսությունը դասագրքի երկրորդ հրատարակության առթիվ տե՛ս «Իրան-Նամե - արևելագիտական հանդես», հատոր 39, 2005թ. էջ 29, պ.գ.թ. Ս. Բաղդասարյանի գրախոսությունը տե՛ս, «Լրաբեր հասարակական գիտությունների» N 1 (605), Երևան, 2002, էջ 216-217:

¹⁹ Լ. Մովսիսյան, Ադրբեջաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

²⁰ Ա. Սարգսյան, Ա. Սաֆարյան, Լ. Սահակյան, Օսմաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

²¹ Ռ. Մելքոնյան, Թուրքական գրականության պատմություն (20-րդ դարի 20-ական թթ. - 21-րդ դարի սկիզբ), Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2017:

Բերենք մի պարզ օրինակ՝ փորձելով ցույց տալ, թե որքան դյուրին կարելի էր դարձնել հայ ուսանողի կողմից թուրքերենի (ինչպես նաև ադրբեջաներենի կամ այլ թուրքական լեզուների) հոլովական համակարգի ընկալումը՝ համապատասխան հայերեն համարժեք ձևերի օգնությամբ: Այսպես, Շ. Այյարովի վերոհիշյալ դասագրքում թուրքերենի հայցական հոլովը ներկայացվում է հետևյալ կերպ. Նշվում է, որ համաձայն ձայնավորների ներդաշնակության օրենքի հայցական հոլովի վերջածանցն ունի հնչունական չորս ձև՝ ı, i, u, ü, շեշտն ընկնում է հոլովական վերջածանցի վրա (կարծում ենք, տրամաբանական էր այս տեղեկատվության նույն ձևակերպմամբ մատուցումը նաև թուրքերենի՝ հայ ուսանողների համար նախատեսված դասագրքում), միաժամանակ նշվում էր, որ հայցական հոլովը պատասխանում է ռուս. «кого? что?» հարցին, և բերվում էին բազմաթիվ օրինակներ (duvar – стена, duvarı – стеноу... oda – комната, odayı – комнату): Այնուհետև փաստվում էր, որ ուղիղ խնդիրը թուրքերենում կարող է և՛ ստանալ, և՛ չստանալ հայցական հոլովի վերջածանց: Ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց, եթե հանդիսանում է ա) հատուկ գոյական անուն, բ) դերանուն (Sizi bekliyorum – Я жду вас (Вас) – հմմտ. Ես սպասում եմ ձեզ/Ձեզ): «Kim» հարցական դերանունը, որպես ուղիղ խնդիր միշտ ստանում է հայցական հոլովի վերջածանց, իսկ «ne» հարցական դերանունը կարող է ստանալ կամ չստանալ հայցական հոլովի վերջածանց (Neyi arıyorsunuz – Что вы (именно) ищете? – հմմտ. Ի՞նչ էք փնտրում, Ne arıyorsunuz

²² Վ. Բայբուրդյան, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

²³ Ռ. Մաֆրաստյան, Ռ. Մելքոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթևոսյան, Հ. Չաքրյան, Ա. Հովհաննիսյան, Թուրքիայի Հանրապետության պատմություն. Բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:

- Что вы ищете? - Ի՞նչ եք փնտրում), գ) եթե հանդիսանում է աշխարհագրական անուն՝ պետությունների, երկրների, ծովերի, քաղաքների, գետերի, սարերի անուններ և այլն. (Turistler İstanbulu geziyorlar – Туристы осматривают Стамбул), դ) իրենց տեսակի մեջ կամ կոնկրետ իրավիճակում եզակի առարկաների (հասկացությունների) անվանումներ (Bulutlar göğü kaplıyor, çoktan güneşi ve ayı görmüyoruz – Тучи обволакивает небо, давно мы не видим солнце и луну.... Lâmbayı söndürme, ben daha uyumuyorum – Не туши лампы, я еще не сплю), ե) այնպիսի առարկաների անվանում, որոնց մասին մինչ այդ խոսվել է կամ, որոնք նկատի են առնվում խոսողի կողմից (İhsana söyle, kitabı getirsin, bana çok lâzımdır – Скажи Ихсану, пусть (он) принесет книгу, (она) мне очень нужна, Aceba Raşit niçin parayı vermiyor? – Интересно, почему Рашид не отдает денег?): Այնուհետև ընդգծվում է, որ «kitabı» նշանակում է ոչ թե ցանկացած գիրք, այլ այն, որը Բիսանը կամ վերցրել է և պետք է ետ բերի, կամ խոստացել է բերել խոսողին: Երկրորդ օրինակում «parayı» նշանակում է ոչ թե ցանկացած փող, այլ այն, որը Ռաշիդը վերցրել է պարտքով, պարտք է ինչ-որ բանի համար, կամ էլ խոստացել է պարտքով տալ: Երկու դեպքում էլ խոսքը գնում է այն գրքի և փողի մասին, որոնք նախապես հիշատակվել են կամ նկատի են առնվում խոսողի կողմից: Զ) այնպիսի առարկայի նյութի անվանում, որն ամբողջությամբ ենթարկվում է ստորոգյալի ազդեցությանը (Çocuk ekmeği ve peyniri tamamen yiyor – Ребенок съедает весь хлеб и сыр, O bütün suyu içiyor – Он выпивает всю воду): «Bu», «şu», «o» ցուցական դերանուն-որոշիչ ստացած ուղիղ խնդիրը միշտ ստանում է հայցական հոլովի վերջածանց (Kemal bu paltou alıyor – Кемаль покупает это

пальто, Sen şu ağacı görüyor musun? – Видишь ли ты это дерево? Ben her gün o adamı görüyorum – Я каждый день вижу этого человека?):

Այնուհետև այլարովյան դասագրքում նկարագրված են այն դեպքերը, երբ ուղիղ խնդիրը հայցական հոլովի վերջածանց չի ստանում. ա) եթե այն գոյական անուն է, որը միայն ճշտում է բայի «սեմանտիկան», բայց իրենից չի ներկայացնում առանձին կոնկրետ եզակի առարկա (Mustafa kitap okuyor – Мустафа читает книгу (в значении: Мустафа читает, занят чтением), Ferit sigara içiyor – Ферид курит папиросу (в значении: Ферид курит), Hasan çay içiyor – Хасан пьет чай (в значении: Хасан занят чаепитием), Cemile şarkı söylüyor – Джемиле поет песню (в значении: поет, занята пением)): Նշվում էր նաև, որ սույն ենթակետում ընթերցողի ուշադրությունը բևեռվում է այն բանի վրա, թե ինչ է անում, ինչով է զբաղված նախադասության ենթակա հանդիսացող դեմքը, բայց ամենևին ոչ այն բանի վրա, թե որ առանձին կոնկրետ եզակի առարկայի, որ կոնկրետ գրքի վրա է ուղղված գործողությունը: Բ) եթե այն գոյական անուն է, որի մասին պատկերացումը կապված է ոչ թե առանձին կոնկրետ եզակի առարկայի հետ, այլ այնպիսի համանման, համասեռ առարկաների ամբողջության, բազմության հետ, որոնցից յուրաքանչյուրը պոտենցիալ կերպով կարող էր լինել տվյալ գործողության օբյեկտ (Ben her gün gazete alıyorum – Я ежедневно покупаю газеты, Siz nereden kundura alıyorsunuz – Где вы покупаете обувь? Yunus bana bilet alıyor – Юнус берет для меня билет): Այս երեք նախադասությունների ստորոգյալների օբյեկտ կարող է լինել համապատասխանաբար նույն օրվա թերթի ցանկացած օրինակ, միևնույն չափի և որակի կոշիկի ցանկացած զույգ, միևնույն նշանակության տոմսի ցանկացած օրինակ: Եթե գնորդը ցանկանում է ստանալ կոշիկի որոշակի զույգ, որոշակի հաց, հենց ինչ-որ հավանած ձևերով և այլն, նա առանձնացնում է հենց այդ առարկան համանմանների միջից ցուցական դերանվան

օգնությամբ. Bu karpuzu verin – дайте этот арбуз, şu ekmeği (somunu) istiyorum – я хочу ту буханку. Գ) Եթե այն նշանակում է համաետն զանգված (Avusturya Macaristandan un aliyor – Австрия покупает в Венгрии муку, Çocuk peynir yiyor – Ребенок ест сыр):

Դ) Հանդիսանում է այնպիսի առարկայի անվանում, որը ծագում է ստորոգյալով արտահայտված գործողության արդյունքում (Anam bana gömlek dikiyor – Мать шьет мне рубашку, Murat Rifata mektup yazıyor – Мурад пишет Рифату письмо, Fabrika senede bine yakın makina yapıyor – Завод выпускает ежегодно около 1000 машин): Առաջին երկու օրինակները կարելի էր և առաջին ենթակետին վերագրել՝ ենթադրելով, որ երկու նախադասությունն էլ կարող են պատասխանել «ի՞նչ է անում մայրը» և «Մուրադն ինչն՞վ է զբաղված» հարցերին:

Ե) Գոյական անուն է, որն ունի (անորոշության կամ քանակի ցուցիչի իմաստով) «bir» որոշիչ, թվականով, ածականով կամ էլ քանակական մակբայի գործառույթ ունեցող «az, çok, fazla» անուններով որոշիչ (Profesör bir eser yazıyor – Профессор пишет (какой-то) труд, Bu defa biz az kâğıt harcıyoruz – На этот раз мы расходует мало бумаги, Ben bir şey işitmiyorum – Я ничего не слышу): Հարկ է նկատի ունենալ տարբերությունը հետևյալ նախադասությունների միջև. «Ben bir şey anlamıyorum - Я ничего не понимаю» (Ես ոչինչ չեմ հասկանում) և «Ben bir şeyi anlamıyorum - Одно (одного) я не понимаю» (Ենթադրվում է, որ ինձ հասկանալի է ամեն ինչ, բացի ինչ-որ մի բանից):

Եթե պարզ ընդարձակ նախադասության մեջ շեշտն ընկնում է ենթակայի կամ անուղղակի խնդրի վրա, բառերի շարադասությունը փոխվում է և ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց (Veli kâğıt getiriyor (Вели несет

бумагы - հմմտ. Վելին թուղթ է բերում) – Kâğıdı Veli getiriyor (Бумагы несет Вели – հմմտ. Թուղթը Վելին է բերում), Ayşe pazardan et ve patates alıyor (Айше покупает на рынке мясо и картофель – հմմտ. Այշեն շուկայից միս և կարտոֆիլ է գնում) – Ayşe eti ve patatesi pazardan alıyor (Мясо и картофель Айше покупает на рынке – հմմտ. Այշեն միսև ու կարտոֆիլը շուկայից է գնում)²⁴:

Հանգամանորեն (զգալիորեն կրճատելով օրինակները, բայց ջանալով հավատարիմ մնալ հեղինակային տեքստի տառին և ոգուն) վերաշարադրեցինք այլարոլյան դասագրքի՝ թուրքերենի հայցական հոլովը ներկայացնող հինգ էջ ծավալ զբաղեցնող տեղեկատվությունը (այն քաջածանոթ է 1950-ական թվականներից մինչև դարավերջ ԵՂՀ-ում թուրքերեն ուսանած արևելագետներին): Հայ ուսանողների համար ստեղծված դասագրքում միևնույն գիտաուսումնական խնդիրը ստացել է հետևալ պարզ լուծումը. «Ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի ածանց, երբ որոշյալ առումով է. Pencereyi açmıyorum – (Ես) չեմ բացում պատուհանը, Bu kitabı okuyorum – (Ես) այս գիրքն եմ կարդում»²⁵:

²⁴ Մանրամասն տե՛ս և հմմտ. М. С. Айларов, Учебник турецкого языка, стр. 59-63:
²⁵ Տե՛ս և հմմտ. Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագոյան, Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, վեցերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2015, էջ 34: Այս դասագրքի առաջին իսկ, և հետագա բոլոր հրատարակություններում հիմնահարցը ներկայացված է նույն կերպ: Թուրքերենի հայցական հոլովի վերջածանցի և հայերեն համապատասխան ձևերում որոշիչ հոդի առկայության համարժեքության ներկայացման (որպես հայ ուսանողների կողմից նյութը դյուրին ընկալման միջոց) «լուծումը» տե՛ս նաև մեր թուրքագետ-դասախոսների միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկուցումների հիմնադրույթներում: Մասնավորապես տե՛ս Ա. Սաֆարյան, Ռ. Մելքոնյան, Հայ ուսանողներին թուրքերենի հայցական հոլովի ուսուցման առանձնահատկությունների մասին, Тезисы докладов международной научно-методической конференции “Проблемы романо-германской филологии: теория и методика преподавания иностранных языков”, Российско-Армянский (Славянский) Государственный университет, Изд-во РАУ, Ереван, 2006, стр. 72-73, Ա. Սաֆարյան, Լ. Սահակյան, Ա. Սարգսյան, Օսմաներենի դասավանդման

*

*

*

Թեև մեր բառարանագրությունը (այդ թվում Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում) երկար պատմություն և, հիրավի, հարուստ ավանդույթներ ունի²⁶, այսուհանդերձ շարունակում է ակտուալ մնալ թուրքերեն-հայերեն և հայերեն-թուրքերեն բառարանների ստեղծման խնդիրը: Ուշագրավ է, որ Հրաչյա Աճառյանն էլ իր բառարանաստեղծ փորձերը սկսել է՝ թուրքերենի արմատական բառարան կազմելով, ինչի մասին վկայում է իր հուշերում. «Աբիկյանի բառարանից դուրս գրելով պարսկերեն, արաբերեն, ինչպես նաև հունարեն և իտալերեն փոխառությունները, կազմեցի թուրքերենի արմատ բառերի ցուցակը իրենց ածանցներով»²⁷:

Թյուրքագիտական բառարանների ստեղծման գործում թե՛ Թուրքիայի Հանրապետությունում, թե՛ նախկին Խորհրդային Միությունում հայազգի գիտնականները զբաղեցրել են առաջատար դիրքեր. բավական է հիշել Բ. Թուղլաձյանի²⁸

սկզբունքները հայալեզու լսարանում, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո, Միջազգային գիտաժողով-4, Երևանի պետական համալսարան, Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա, մայիս, 2016թ., Երևան, ԵՊՀ հրատ., էջ 58-59: Բնականաբար նույն մոտեցումն է առկա նաև հայ ուսանողների համար ստեղծված օսմաներենի և աղբբեջաներենի դասագրքերում: Տե՛ս նաև հմտ. Ա. Մարգարյան, Ա. Մաֆարյան, Լ. Սահակյան, Օսմաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 69-70, Լ. Սովսիպյան, Աղբբեջաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 48:

²⁶ Թուրքերեն-հայերեն և հայերեն-թուրքերեն բառարանների մասին մանրամասն տե՛ս Գ. Կ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 191-195, 243-246:

²⁷ Մասնավորապես տե՛ս Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 108:

²⁸ Բարսեղ Թուղլաձյանը (Pars Tuğlacı) հեղինակել է նաև երկլեզվյան և երեքլեզվյան ընդհանուր ու մասնագիտական (Թուրքերեն-անգլերեն, թուրքերեն-ֆրանսերեն, անգլերեն-լատիներեն-թուրքերեն բժշկական) հիմնարար

ստեղծած՝ հանրագիտարանային «Okyanus» կամ Է. Սևրոյանի²⁹ «Этимологический словарь тюркских языков» (վաղուց դասական դարձած) բառարանները: Թուրքիայում ստեղծվել են հայկական վարժարանների աշակերտների և ուսուցիչների համար ստեղծված, անգամ «նեղ» մասնագիտական եզրաբանություն պարունակող թուրքերեն-արևմտահայերեն բառարաններ³⁰: Արևելահայերեն-թուրքերեն բառարան է հրատարակել նաև

բառարաններ, օսմանագիտական, թուրքագիտական և հայագիտական աշխատություններ՝ արժանանանլով միջազգային ճանաչման: Մանրամասն տե՛ս Hilda Ekmekçyan, Pars Tuğlacının 50 yıllık çok yönlü faaliyet kronolojisi, İstanbul, 2006: Բարսեղ Թուղլաճյանը՝ որպես նշանավոր լեզվաբան և բառարանագիր(թուրքերենի ամենամեծ բացատրական բառարանի հեղինակ), հիշատակվում է նաև խորհրդային հանրագիտարաններում: Տե՛ս Большая Советская Энциклопедия, том 26, Москва 1977, стр. 288.

²⁹ Արևելագետների, նախկին Խորհրդային Միության թուրքալեզու ժողովուրդների (հատկապես Ղրիմի թաթարների) մտավորականության շրջանում բացառիկ հեղինակություն վաստակած Է. Վ. Սևրոյանի մասին տե՛ս К. М. Мусаев, Л. С. Левитская, Эрванд Владимирович Севортян (К восьмидесятилетию со дня рождения) – “Советская тюркология”, Баку – 1981, N 5, стр. 101-103: Աշխատությունների մատենագիտությունը տե՛ս “Советская тюркология”, 1976, N 5, стр. 102-104, 1978, N 2, стр. 109-110 (Հայտնի աշխատություններից են նաև Аффиксы глаголообразования в азербайджанском языке, М. 1962, Аффиксы именного словообразования в азербайджанском языке, М., 1966): Սևրոյանական գիտական դպրոցի նշանավոր ներկայացուցիչը Հայաստանում ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի հիմնադիր վարիչ, պրոֆեսոր Մերի Քոչարն էր, ում գիտական ժառանգության մեջ կան և՛ լեզվաբանական, և՛ գրականագիտական, և՛ պատմագիտական արժեքավոր հրապարակումներ: Լեզվաբանական աշխատություններից մասնավորապես տե՛ս М. Р. Кочар, Турецкие элементы в языке константинопольских армян (лекция), Ер., 1981: Տե՛ս նաև Գ. Մելիքյան, Ա. Սաֆարյան, Պրոֆեսոր Մ. Հ. Քոչարի կյանքի ու գիտամանկավարժական գործունեության մասին, Արևելագիտական ժողովածու, հատոր 5, Երևան, 2004, էջ 3-7:

³⁰ Տե՛ս Հ. Արիստակես վրդ. Պօղիաճեան, Թրքերենէ հայերեն առձեռն բառարան, 1981, Yetvart Kovan, Türkçeden-Ermeniceye Ticari-Mali-Ekonomik terimler sözlüğü (Թրքերեն-հայերեն Առևտրական-Ելմտական-Տնտեսագիտական աստիճաններու բառարան), İstanbul, T.E.A.O. Öğretmenleri Yardımlaşma Vakfı Agop Apelyan Matbaası, 1996.

Անկարայի համալսարանի հայագիտական առարկաների դասախոս, դոկտոր Բիրսեն Քարաջան³¹:

Խորհրդային Հայաստանում թուրքերենի դասավանդման գործընթացում արդյունավետ կերպով օգտագործվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի բազմամյա դոցենտ Արփիկ Մինասյանի կազմած և ճանաչված պոլսահայ մտավորական, օսմաներենի ու թուրքերենի վաստակաշատ դասախոս Խաչիկ Ամիրյանի խմբագրությամբ հրատարակված ընթերցարանը, որը պարունակում էր նաև թուրքերեն-հայերեն բառարան³²: Անկախության տարիներին լույս տեսան Կ. Կոնդակյանի և Մ. Դերմենջյանի բառարանները³³: Հաստատայան ճանաչված լեզվաբաններից մեկը՝ երջանկահիշատակ պրոֆեսոր Ռուբեն Ղազարյանը, ով բազմամյա տքնաջան աշխատանքով արևելահայ բառարանագրության գանձարանը հարստացրել է մի շարք արժեքավոր աշխատություններով³⁴, հեղինակ է նաև թուրքերեն-արևելահայերեն բառարանի³⁵: Միաժամանակ հարկ է նշել, որ

³¹ Karaca Birsen, Doğu Ermenice – Türkçe Sözlük, Ankara, 2001. Բառարանն ընդգրկում է նաև արևելահայերենի քերականության համառոտ ակնարկ:

³² Ա. Մ. Մինասյան, Թուրքերենի ընթերցարան (առաջին և երկրորդ կուրսերի համար), Երևան, 1986, (247 էջ):

³³ Տե՛ս Կ. Ս. Կոնդակյան, Թուրքերեն-հայերեն բառարան, Երևան, 2003, (376 էջ), Մ. Դերմենջյան, Հայերեն-թուրքերեն բառարան (60.000 բառ), Երևան, 2013 (400 էջ):

³⁴ Հայ բառարանագրության գանձարանը հարստացրել են պրոֆ. Ռ. Ղազարյանի «Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարանը» (գիրք Ա-Ձ, Երևան, 1998-2001), «Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարանը» (2-րդ հրատ., Երևան, 2002), «Գրաբարի հոմանիշների բառարանը» (Անթիլիաս-Երևան, 2006), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» (2-րդ փարեփոխված հրատարակություն, Երևան, 2009):

³⁵ Տե՛ս Ռ. Ղազարյան, Թուրքերեն-հայերեն բառարան. շուրջ 27000 բառ և բառակապակցություն (խմբագիրներ՝ Ռ. Հովսեփյան, Պ. Ջավիկյան), Երևան, 2003:

բառարանագրության ակադեմիական սկզբունքներին և ավանդույթներին հավատարմությամբ կազմված այս բառարանում էլ, ցավոք, կարելի է մատնանշել անբացատրելի վրիպակի օրինակ: Այսպես՝ «դյոնում» (dönüm) բառահողվածում բառի երկրորդ՝ հողատարածքի չափման միավոր հանդիսացող եզրի իմաստը տառացիորեն ներկայացված է հետևյալ կերպ. «ակր (հողի մակերեսի տարածաչափ, որը հավասար է 4047մ²)»³⁶: Հատկապես բուհերի արևելագիտության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների, ինչպես նաև՝ թարգմանիչների համար նախատեսված (ինչպես տպագրված է բառարանում) տեղեկատվության աղբյուրի մեջ ավելի քան չորս հարյուր տոկոսի սխալանքը պրակտիկայում կարող է պարզապես անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Բնականաբար, թուրքերենի դասախոսներս ուսանողներին և ապագա թարգմանիչներին պարտավորված ենք նախագոյազանել հիշյալ և նմանատիպ թյուրիմացությունների առկայության մասին, իսկ համապատասխան բառահողվածում ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը. «dönüm - հողի չափման միավոր, դյոնում/40x40 քառ. արշին, ≈1000մ²»³⁷: Անմիջապես հավելենք, որ Ալեքսանդր Սաֆարյանի, Աշոտ Սողոմոնյանի և Տիրան

³⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, Թուրքերեն-հայերեն բառարան, էջ 135:

³⁷ Տե՛ս Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյոզյան, Թուրքերենի դասագիրք (Թուրքերեն-հայերեն ուսումնական բառարան), էջ 203: Նույն կերպ (պարտադիր՝ ≈ մոտավորության նշանով) է ներկայացված «dönüm» բառահողվածը նաև այս դասագրքի նախորդ հրատարակություններում: Հմնտ. «dönüm – деңюм (мера площади, равная 40x40 кв. аршин, - 919,3 м²)», А. Н. Баскаков и др., Турецко-русский словарь (48000 слов), Москва, 1977, с. 246, թուրք ճանաչված բառարանագիր Քեմալ Դեմիրայի բառարանում նույն բառահողվածի (հողատարածքի չափի միավորի իմաստով) տեղեկատվությունը ներկայացնում ենք անփոփոխ. «dönüm - 1. Eni boyu kırkar arşın olan eski yüzey ölçüsü (2720 m²). 2. Bugün, 1000 metre karelik alan ölçüsü», K. Demiray, Temel Türkçe Sözlük, İstanbul, 1994, s. 233:

Լոքմագոյոյանի «Թուրքերեն-հայերեն լեզվաբանական գիտաբառերի բառարանը», «Թուրքերեն-հայերեն ուսումնական բառարանը», «Թուրքերեն-հայերեն հապավումների բառարանը» և «Աշխարհագրական անունների ցանկը»³⁸ հետապնդել են գեթ բուհերում թուրքերենի դասավանդման գործընթացը սպասարկելու նպատակ՝ երբևէ չհավակնելով առանձին գրքով (գրքույկներով) հրատարակվելու (հիշյալ բառարանները տպագրվել են որպես վերոհիշյալ բուհական դասագրքի հավելված)³⁹:

Այսպիսով, մեր արևելագետների կողմից տասնամյակներ շարունակ մշտապես օգտագործվող թուրքերեն-ռուսերեն և ռուսերեն-թուրքերեն հիմնարար ակադեմիական բառարանների համարժեք թուրքերեն-արևելահայերեն և արևելահայերեն-թուրքերեն բառարանների ստեղծման խնդիրը այսօր էլ մնում է արդիական, կարծում ենք, այն կարող է լուծվել ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի, ՀՀԻ Հայ-օսմանական առնչությունների բաժնի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության և Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտների մասնագետների հետևողական համագործակցության և բառարանաստեղծ գործընթացում թուրքերենի լեզվակիրների ընդգրկման արդյունքում:

³⁸ Այս ցանկի ստեղծմանը մասնակցել է նաև ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ Գեղամ Բաղալյանը:

³⁹ Տե՛ս Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագոյոյան, Թուրքերենի դասագիրք, էջ 170-307:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ ТУРЕЦКОГО ЯЗЫКА АРМЯНСКИМ СТУДЕНТАМ

(Резюме)

*Сафарян Александр,
Галшоян Сирануйш*

В статье представлен краткий очерк преподавания турецкого языка в армянских школах и вузах, обзор учебников турецкого языка для армяноязычных учащихся, армянско-турецких и турецко-армянских словарей, методической литературы, созданной армянскими тюркологами. Детально рассматриваются проблема преподавания винительного падежа в турецком языке русскоязычным и армяноязычным студентам.

ON SOME PECULIARITIES OF TEACHING TURKISH TO ARMENIAN STUDENTS

(Summary)

*Safaryan Alexander,
Galshoyan Siranuysh*

This article investigates teaching Turkish in the schools and universities of Armenia, the review of textbooks for Armenian-speaking students, the Armenian-Turkish and Turkish-Armenian vocabularies, methodological literature, written by Armenian Turkologists. The detailed analysis of the problem of the teaching of the accusative case in modern Turkish for Russian-speaking and Armenian-speaking students.